



Արյան ծով Ֆարերյան կղզիներում



Կենսապահովման հիմունքներ



Դեկտեմբերը ցուրտ կլինի



Հիմնավոր տեղեկատվական բազա



արտակարգ թերթ

N 44 (413)

2.12.2011 - 8.12.2011

www.emergency.am

www.mes.am

Որ հրավառություններն իրոք տրոսական լինեն

Անվտանգության համար՝ համապեղ



Նոյեմբերի 30-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի մոտ հրավիրված խորհրդակցությանը նվիրված էր հրագործական արտադրանքի անվտանգ կիրառման խնդիրներին:

Նախարար Երիցյանը նշեց, որ առաջիկա տոնական օրերին մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտներում եւ այլ վայրերում բնակչության անվտանգությունն ապահովելու, հրդեհների եւ այլ արտակարգ իրավիճակների առաջացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է հնարավորինս բացառել չլիցենզավորված եւ կասկածելի ծագում ունեցող հրագործական արտադրանքի կիրառումը, ինչպես նաեւ վերահսկել դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը:

ԱՆ Պետական հրդեհային տեսչությանը համեմարարվեց ճշտել եւ հաշվառել հանրապետության տարածք հրավառություններ եւ հրագործական արտադրանք ներմուծողների ցանկը, ինչպես նաեւ պարզել եւ ուսումնասիրել այդ արտադրանքի պահեստավորման եւ պահպանման վայրերը: Պետական հրդեհային տեսչությունը Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ կիրականացնի համատեղ միջոցառումներ՝ կազմակերպելով այցելություններ հրավառությունների պահպանման վայրեր եւ դրանք կիրառող օբյեկտներ: Ձեռնարկվող բոլոր աշխատանքները կիրականացվեն ոստիկանության հետ սերտ համագործակցությամբ:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը կրկին հիշեցնում է, որ մարդկանց կյանքն ու առողջությունը պահպանելու, հրդեհներից ու այլ արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հրավառություն եւ այլ հրագործական արտադրանք կիրառելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները ինչպես բնակարաններում, այնպես էլ մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտներում:

Նոյեմբերի 25-ին ԱԻ նախարար Արմեն Երիցյանը ընդունեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ պատվիրակությանը՝ գլխավոր տնօրեն Շելեստ Շայդուլինի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին՝ Արմեն Երիցյանը համառոտ ներկայացրեց նախարարության կառուցվածքը, նրանում ներգրավված ծառայություններն ու գործակալությունները եւ դրանց գործառնությունները:

Արտակարգ իրավիճակների նախարարը, հիշատակելով Տավուշի մարզում տեղի ունեցած խոշոր սողանքի հետեւանքների վերացման ժամանակ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատակիցների դրսևերած աջակցությունն ու պրոֆեսիոնալիզմը, նշեց, որ ԱԻ նախարարությունն ու «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունը համատեղ բազմաթիվ քայլեր ունեն անելու եւ ծրագրեր իրականացնելու՝ երկրում արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետեւանքների նվազեցման եւ երկաթուղու անվտանգ շահագործման բնագավառում:

Յուրերը շրջեցին նախարարության տարածքում, հետեւեցին ԱԻ բարձրահարկ սեսյանային մտայնության կառուցվածքին: Յուրերն առանձնապես տպավորված էին ԱԻ ճգնաժամային կառավարման կենտրոնով՝ աղետների կառավարման, խոցման գոտիների ավտոմատ տեղորոշման, կոնկրետ երկաթուղային գծերի եւ դրանց սպառնազուրկ բոլոր տեսակի վտանգներն ու ռիսկերն ընդգրկող ծրագրերով, 911 ծառայությամբ:

Մինչ այդ ԱԻ նախարարության եւ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի աշխատանքային խմբերը համագործակցության հուշագրի նախագիծ էին պատրաստել, որը որոշ սրբագրումներից հետո կստորագրվի մոտ ապագայում:

Փորձաքննության է ենթարկվել 29 վերելակ

Գնահատականը բացասական է



Այս տարվա նոյեմբերի 17-ից 25-ը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Առեն-19» համատիրության նախագահ Դ. Դուկասյանի եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 2011 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված պայմանագրով տեխնիկական անվտանգության փորձաքննություն է իրականացվել Երեւանի Իսակովի 42/4 շ. 1-ին մուտքի, 2-րդ մուտքի, 3-րդ մուտքի, 42/3 շ. 1-ին մուտքի, 42/2 շ. 1-ին մուտքի, 3-րդ մուտքի, 42/1 շ. 1-ին մուտքի, 2-րդ մուտքի, 42 շ. 1-ին մուտքի, 40 շ. 1-ին մուտքի, 2-րդ մուտքի, 3-րդ մուտքի, 38 շ. 1-ին մուտքի, 38/2 շ. 1-ին մուտքի, 38/3 շ. 1-ին մուտքի, 36/3 շ. 1-ին մուտքի, 36/2 շ. 1-ին մուտքի, 36/2 շ. 2-րդ մուտքի, 36/1 շ. 1-ին մուտքի, 36 շ. 1-ին մուտքի, 2-րդ մուտքի, 3-րդ մուտքի, 34 շ. 1-ին մուտքի, 32 շ. 1-ին մուտքի, 2-րդ մուտքի մարդատար 320 կգ բեռնամբարձությամբ վերելակներում:

Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ չկա տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ մշտական վերահսկողություն, պարբերական տեխնիկական զննումներ իրականացնող հատուկ պատասխանատու կառույց, որակավորված պատասխանատու անձ կամ այդ գործառնություններն իրականացնող մասնագիտացված կազմակերպության հետ կնքված պայմանագիր:

Նոյեմբերի 11-ից 17-ը՝ «Վաղարշապատ» համատիրության նախագահ Դ. Հախվերդյանի եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև հոկտեմբերի 28-ին կնքված պայմանագրով տեխնիկական անվտանգության փորձաքննություն է իրականացրել Երեւանի Անդրանիկի 118 շ. 1-ին մուտքի եւ 100 շ. 1-ին մուտքի մարդատար 320 կգ բեռնամբարձությամբ վերելակներում, եւ նույն արդյունքներն են գրանցվել, ինչ Իսակովի փողոցի շենքերում:

Սեպտեմբերի 20-ից նոյեմբերի 23-ն էլ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Կենտրոն 1» համատիրության եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 2011 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված պայմանագրով տեխնիկական անվտանգության փորձաքննություն է իրականացվել Երեւանի Ամիրյան 15 եւ 20 հասցեում գտնվող, 500 կգ նոմինալ բեռնամբարձությամբ բեռնամարդատար վերելակներում: Արտադրական վտանգավոր օբյեկտներում ուսումնասիրվել են տեխնիկական փաստաթղթերը եւ տեխնիկական միջոցները:

Արդյունքում պարզվել է, որ չեն գործում որսիչներն անջատող վերջնական անջատիչը, քարշող ճոպանների շահագործման ընթացքում թուլացման կամ բլոկավորման սարքերը, արագության սահմանափակիչի ճոպանների մաշվածությունը գերազանցում է թույլատրելի մե-

ծությունը, որը չի համապատասխանում «վերելակների եւ դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգ»-ի պահանջներին:

Հիմք ընդունելով տեխնիկական անվտանգության փորձաքննությունների արդյունքները եւ այն հանգամանքը, որ որոշ դեպքերում վթարի հավանականությունը բարձր է, նշված «վերելակ» արտադրական վտանգավոր օբյեկտներին տրվել է բացասական գնահատական: Առավել մանրամասն կարող եք տեղեկանալ Արտակարգ իրավիճակների նախարարության www.mes.am կայքում:

Հաստատվել է 2012 թ. սպուգումների ծրագիրը
ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության կողմից 2012 թ. անցկացվելիք ստուգումների ծրագրում ներառված օբյեկտների ցուցակին կարելի է ծանոթանալ Արտակարգ իրավիճակների նախարարության www.mes.am կայքից:



Դեղորայքային թունավորում

Նոյեմբերի 28-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 16.10-ի սահմաններում Երեւանի Կորյունի փողոցի 5-րդ շենքի 33ա բնակարանի բնակիչ՝ 2008 թ. Ալեն Նազարյանը թունավորվել է դեղորայքից: Տուժածը տեղում ստացել է առաջին բուժօգնություն:

Ծնողները հրաժարվել են երեխային հիվանդանոց տեղափոխելուց:

• Նոյեմբերի 29-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.55-ին դեղորայքից թունավորումով հիվանդանոց է տեղափոխվել Ստեփանավանի բնակչուհի՝ 1996 թ. ծնված է. Սկրտունյանը:

Տուժածի առողջական վիճակը բժիշկները գնահատել են միջին ծանրության:

Մեռակ եւ անօգնական

Նոյեմբերի 24-ին, ժամը 14.25-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ավան վարչական շրջանի Սայաթ-Նովա թաղամասի 1-ին փողոցի 3-րդ շենքի 65 բնակարանի դուռը փակվել է եւ ներսում է մնացել անչափահաս երեխա. բնակարանի դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ 2009 թ. ծնված Մարիամ Դավանյանին անվնաս հանձնել ծնողներին:

• Նոյեմբերի 28-ին, ժամը 15.51-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Տիգրան Մեծի պողոտայի 61 շենքի 7-րդ բնակարանի բնակիչը չի պատասխանում դռան եւ հեռախոսի զանգերին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ԵԿԿ օպերատիվ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խմբերը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ ննջասենյակի հատակին հայտնաբերել 1927 թ. ծնված Թամարա Բաղդասարովային, որին ցուցաբերել են առաջին բուժօգնություն եւ հանձնել դեպքի վայր ժամանած «1-03» ծառայության աշխատակիցներին:

• Նոյեմբերի 29-ին, ժամը 16.08-ին ահազանգ է ստացվել, որ Մանանյան 32 շենքի 45-րդ բնակարանի բնակիչն ընկել է բնակարանում, չի կարողանում շարժվել. բնակարանի դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները, ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ, բացել են բնակարանի դուռը, հյուրասենյակի հատակին հայտնաբերել անօգնական վիճակում գտնվող 1932 թ. ծնված Քնարիկ Վարդանյանին:

Հիվանդանոց տեղափոխելու կարիք չի առաջացել:

• Նոյեմբերի 29-ին, ժամը 18.50-ին ահազանգ է ստացվել, որ Գյումրիի Պարույր Սեւակ փողոցի 17 շենքի 19-րդ բնակարանում վատառողջ մարդ կա. բնակարանի դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Փրկարարները, ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ, բացել են բնակարանի դուռը, հյուրասենյակի հատակին անօգնական վիճակում հայտնաբերել է «1-03» ծառայության աշխատակիցներին եւ հանձնել 1959 թ. ծնված Ռազմիկ Տոնոյանին:

Քաղաքացիները կ'Դեբեք գետը

Նոյեմբերի 25-ին, ժամ 17.07-ին, Լոռու մարզից ահազանգ է ստացվել, որ քաղաքացի է նետվել Դեբեք գետը:

Դեպքի վայր են մեկնել հրշեջ-փրկարարները: Հրշեջ-փրկարարները գետից դուրս են բերել 1978 թ. ծնված Արթուր Բաբայանին, որը գտնվել է ոչ սթափ վիճակում, եւ հանձնել «1-03» ծառայության աշխատակիցներին:

Տուժածը տեղափոխվել է Ալավերդիի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից

Նոյեմբերի 24-ին, ժամը 19.25-ին, Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ

Եղեզնածոր-Ջերմուկ ավտոճանապարհի 42-րդ կմ-ում ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ թաղվել ճանկույտի մեջ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները ճանապարհի երթևեկելի մաս են դուրս բերել Մ. Գրուբյանյանին կցագրված «ՎԱԶ-2121» մակնիշի 032 SS 04 պետհամարանիշով ավտոմեքենան:

Մեքենան ընկել է գետը

Նոյեմբերի 25-ին, ժամը 10.33-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 33-րդ կմ-ում (թունելի մոտ) «Ֆորդ տրանզիտ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ ընկել գետը. անհրաժեշտ է բուժօգնությունը:



ճշտվել է, որ տուժածներն իրենց ուժերով դուրս են եկել եւ տաքսի ծառայության ավտոմեքենայով շարունակել ճանապարհը: Պատահարի հետեւանքով տարբեր մարմնական վնասվածքներով Վանաձորի թիվ 1 հիվանդանոց են դիմել Վանաձորի բնակիչներ՝ 1972 թ. ծնված Դանիել Սողոմոնյանը եւ 1978 թ. ծնված Արմեն Դոխոյանը: Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են բավարար:

Մեքենան ընկել է ձորը

Նոյեմբերի 27-ին, ժամը 22.05-ին Տավուշի մարզից ահազանգ է ստացվել, որ «Սորաններ» դեմոկրատիկ տարածքում «ԳԱԶ-66» մակնիշի ավտոմեքենան ընկել է ձորը, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-21011» մակնիշի 24 ԱԼ 137 պետհամարանիշով ավտոմեքենան (վարորդ՝ 1995 թ. ծնված Ռոման Արամյան) դուրս է եկել ավտոճանապարհի երթևեկելի մասից եւ շրջվել ձորը:

Հրշեջ-փրկարարները ձորից դուրս են

բերել Ռ. Արամյանին, ուղեւորներ՝ 1973 թ. ծնված Դավիթ Մելիքբեկյանին, 1981 թ. ծնված Սուրեն Մելիքբեկյանին, 1967 թ. ծնված Ռաֆիկ Զովակիմյանին եւ 1979 թ. ծնված Արտակ Թումանյանին եւ հանձնել Բերդ քաղաքի շտապօգնության աշխատակիցներին:

Տուժածները շտապօգնության մեքենաներով տեղափոխվել են Բերդի գիմնազիական հոսպիտալ, որտեղ Ռ. Արամյանը, Դ. Մելիքբեկյանը, Ս. Մելիքբեկյանը եւ Ռ. Զովակիմյանը, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս են գրվել, իսկ Ա. Թումանյանը ոտքի կոտրվածքով տեղափոխվել է Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Տուժածի առողջական վիճակը բժիշկները գնահատել են միջին կայուն:

Ավտոպատահար Զարեցի փողոցում

Դեկտեմբերի 1-ին, 01.10-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Զարեցի 1/3 հասցեում՝ «Մոցարտ» սրճարանի դիմաց, տեղի է ունեցել ավտոպատահար եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են «Մերսեդես» մակնիշի 81 ՍՍ 111 պետհամարանիշով եւ «Սենս» մակնիշի 69 54 պետհամարանիշով (պատկանում է «Դեմտ» տաքսի ծառայությանը) ավտոմեքենաները: Պատահարի հետեւանքով «Սենս» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1954 թ. ծնված Ռազմիկ Սուքիասյանը, ուղեւորներ՝ 1980 թ. ծնված Ա. Առուստամյանը (Երեւանի բնակիչ) եւ Վանաձորի բնակիչներ՝ 1982 թ. ծնված Վ. Նազարյանը եւ 1982 թ. ծնված Կ. Սազմանյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ տեղի ուժերով տուժածները դուրս են բերվել ավտոմեքենայից եւ տեղափոխվել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է:

Վթարված ջրագիծ Վանաձոր-Դարպաս ավտոճանապարհին

Նոյեմբերի 26-ին, ժամը 16.05-ին Լոռու մարզից ահազանգ է ստացվել, որ Վանաձորի «Սարի թաղ» կոչվող թաղամասը սնուցող ջրագիծը վթարվել է՝ ջուրը եւ ջրաբերուկները լցվում են Վանաձոր-Դարպաս ավտոճանապարհի սկզբնամասը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության >>>

միջազգային լուրեր

Այրվել է 15 ուղևոր

Հնդկաստանում երկու ուղևորատար ավտոբուսների բախման հետեւանքով ողջակիզվել է 15 մարդ: Տեղական իշխանությունների հաղորդմամբ՝ 57 մարդ ստացել է ծանր այրվածքներ:

Ողբերգությունը տեղի է ունեցել երկրի Բուդհանա շրջանի ավտոմայրուղում: Ավտոբուսների բախումից հրդեհ է բռնկվել: Տուժածները տեղափոխվել են հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ նրանցից շատերը ծայրահեղ ծանր վիճակում են:

Պատահար Իռլանդական ծովում

Նոյեմբերի 27-ի գիշերը Իռլանդական ծովում նավ է խորտակվել, որի վրա ռուսական անձնակազմ է եղել:

Հանքաքարով բեռնված նավը խորտակվել է փոթորիկի ժամանակ: Նավի վրա ճեղք է առաջացել, եւ ջուրն սկսել է լցվել ներս: Անձնակազմի հինգ անդամներից երկուսին հաջողվել է փրկել: Բացի այդ, փրկարարները

հայտնաբերել են մեկ զոհված նավաստու մարմինը: Անձնակազմի մյուս անդամների ճակատագիրն անհայտ է մնում:

Հայտնի է, որ վթարված բեռնանավի անձնակազմին փրկելու գործողություններին նասնակցել է Մեծ Բրիտանիայի արքայազն Ուիլյամը: Թագավորական ռազմաօդային ուժերում ծառայության մեջ գտնվող արքայազնն այն ուղղաթիռի օդաչուներից մեկն էր, որի միջոցով փրկարարական լաստի վրա գտնվող նավի անձնակազմի երկու անդամները ցամաք էին տեղափոխվել:



Ֆուտբոլիստները՝ ավտովթարի զոհ

Տոգոյի ամենատիտղոսակիր ֆուտբոլային թիմի՝ Էտուալ Ֆիլանտի ավտոբուսը ենթարկվել է վթարի եւ այրվել:

Տոգոյի մայրաքաղ Լոմեից 80 կիլոմետր հեռավորության վրա տեղի ունեցած ավտովթարում զոհվել են թիմի ութ ֆուտբոլիստներ, եւս 13 խաղացողներ, մարզիչներ եւ թիմի ղեկավարներ ծանր վիճակում տեղափոխվել են հիվանդանոց:

Էտուալ Ֆիլանտ թիմը 19 անգամ դարձել է երկրի չեմպիոն:

Ջեռչերի «սեւ ուրբաթ» ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում «սեւ ուրբաթ» տարվա գլխավոր զեղչերի սեզոնն ուղեկցվել է մի շարք տհաճ միջադեպերով: Երկրի միլիոնավոր բնակիչներ եւ զբոսաշրջիկներ, որոնք կեսգիշերին գորհել են խանութները, պատրաստ են եղել անելու ամեն ինչ՝ ամենամեծ զեղչերով ապրանք ձեռք բերելու համար:

Ոստիկանությունը միջամտելու առաջին լուրջ առիթն ունեցել է Լոս Անջելեսում՝ հինգշաբթի երեկոյան, երբ «Ուոլմարթ» հանրախանութի հերթում մի կին, իր «մրցա-



կիցներից» առաջ անցնելու համար, 20 գնորդների աչքերին ուղղակի պղպեղ է շաղ տվել: Նյու Յորքում նույն ցանցի խանութներից մեկում վիճաբանություն է ծագել ոսկերչական բաժնի դրամարկղի մոտ. արդյունքում վնասվածքներ են ստացել երկու կին եւ մեկ տղամարդ:

Հյուսիսային Կարոլինայում էլ երկու մարդ հրագեն են կիրառել՝ խանութներում իրենց ճանապարհը բացելու համար:

ԱՄՆ մանրածախ առևտրի ազգային ֆեդերացիան վստահ է, որ ոչինչ չի խանգարում հասնել նոր ռեկորդի: Փորձագետների կանխատեսումներով՝ «սեւ ուրբաթից» սկսած երեք օրվա ընթացքում ամերիկյան հանրախանութներ կայցելի 152 միլիոն մարդ, ինչը մեկ տոկոսով կգերազանցի անցյալ տարվա ցուցանիշը:

արագ արձագանքման ծառայություններ



>>> օպերատիվ խումբը:
Ջրատարից ջրի արտահոսքը դարձրեցված է: Ավտոճանապարհն անցանելի է: Վթարի վայրում «Լոռու ջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ի աշխատակիցների կողմից կատարվում են վթարավերականգնողական աշխատանքներ:

Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 33 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խտածածկ տարածքներում:

Այրվել է ավտոմեքենա

Նոյեմբերի 24-ին, ժամը 14.06-ին Վայոց ձորի մարզից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Ջերմուկի Գործարանային 1 հասցեում («Ջերմուկի Մայր Գործարան» ՓԲԸ-ի տարածքում) գտնվող կաթսայատանը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Տեղում պարզվել է, որ այրվում է Ռ. Հարությունյանին կցագրված «ԿամԸ» մակնիշի 623 LS 56 պետհամարանիշով ավտոմեքենան:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 14.20-ին, մարվել՝ 14.38-ին: Այրվել են ավտոմեքենայի խցիկն ամբողջությամբ, շարժիչի մալուխները եւ 3 անվադող:

Այրվել է տնակ

Նոյեմբերի 25-ին, ժամը 06.20-ին Սյունիքի մարզից ահազանգ է ստացվել, որ Կապանի Գործարանային 14 շենքի մոտակայքում այրվում է տնակ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 06.50-ին, մարվել՝ 07.50-ին: «Կապան ԲՈՒՄՏ» ՓԲԸ-ի տարածքում այրվել է փայտե տնակ 15 քմ մակերեսով:

Հրդեհ բնակարանում

Նոյեմբերի 25-ին, ժամը 13.07-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Տիգրան Մեծ պողոտայի 48 շենքի 24-րդ բնակարանում հայտնաբերվել է ծխահեղձ եղած տղամարդու դի, սենյակում առկա է ծխապատ գոտի:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ բնակարանում մասամբ այրվել են բազմոցը եւ բազկաթոռը, որի հետեւանքով տան բնակիչ՝ 1927 թ. ծնված Վազարան Գեորգյանը ծխահեղձ է եղել (ծեռքի շրջանում ստացել է այրվածքներ):

Հրդեհը մարվել է տեղի ուժերով:

Արյան ծով Ֆարերյան կղզիներում

Բնության պաշտպաններին կրկին չհաջողվեց կանխել դելֆինների խելահեղ սպանությունը: Սա ամենասարսափելի ավանդույթներից է, որոնք դեռ մարդկային քաղաքակրթության մի մասն են:

Ֆարերյան կղզիների ափերի մոտ, որոնք Դանիայի թագավորության ինքնավար շրջան են, այս արյունալի ծեսը գոյություն ունի 10-րդ դարից ի վեր:

Նոյեմբերի 22-ին տասնյակ նավակներ սեւ դելֆինների խմբին քշեցին դեպի նավահանգիստը, որտեղ էլ իրականացվեց այդ արյունալի գործողությունը՝ Գրինդերի՝ սեւ դելֆինների սպանությունը:

Այդ կաթնասունների միսն ու ճարպը տեղաբնակների ազգային սննդակարգի մասն են, այդ պատճառով էլ այն առետրային որս չի համարվում:

Այս արյունոտ ավանդույթի դեմ են արտահայտվում շատ միջազգային կազմակերպություններ: Ամեն տարի սպանվում է ենթարկվում 950 կենդանի, իսկ դա 500 տոննա միս է եւ ճարպ, որը կազմում է կղզիների մսի արտադրության 30 տոկոսը:

Գրինդերի սպանված մասնակցում են միայն տղամարդիկ, որոնք այդ կերպ իրենց կղզիների բազմադարյա մշակույթի ու պատմության մասն են զգում:



սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. նոյեմբերի 24-ից 30-ը ՄՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալլ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալլ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 164 երկրաշարժ, որից 156-ը Թուրքիայի արեւելքում՝ Վան քաղաքի շրջանում: Նոյեմբերի 24-ին 4 բալլանոց երկրաշարժ է տեղի ունեցել Թուրքիայում, Ալաշկերտ քաղաքից 21 կմ հարավ-արեւմուտք, որին նույն էպիկենտրոնային գոտում մեկ ժամվա ընթացքում հաջորդել է 2 ստորգետնյա ցնցում՝ 3-4 եւ 3 բալլ ուժգնությամբ: Նույն օրը Թուրքիայի Իզդիր քաղաքից 16 կմ հարավ-արեւելք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը կազմել է 4 բալլ: Նոյեմբերի 24-ին եւ 25-ին 3-4 բալլ ուժգնությամբ 2 սեյսմիկ իրադարձություն է գրանցվել Ադրբեջանի տարածքում, առաջինը Նախիջևան քաղաքից 23 կմ արեւելք, երկրորդը Շամխոր քաղաքից 9 կմ հարավ-արեւմուտք: Նոյեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտից 30 կմ հյուսիս-արեւմուտք եւ Ադրբեջանի Շամխոր քաղաքից 19 կմ հարավ-արեւմուտք տեղի են ունեցել 3 բալլանոց ստորգետնյա ցնցումներ:

Պահպանվում է սեյսմիկ ակտիվությունը Թուրքիայի արեւ-

ելյան հատվածում: Անցած շաբաթ գրանցվել է 156 հետցնցում, որից մեկը՝ 7 բալլ ուժգնությամբ (5.0 մագնիտուդ): Երկրաշարժը տեղի է ունեցել նոյեմբերի 30-ին Վան քաղաքից 3 կմ հյուսիս: Ստորգետնյա տատանումները դարձյալ խուճապ են առաջացրել բնակչության մոտ:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ գոտում (հրե օղակ): Նոյեմբերի 24-ին ճապոնիայի հյուսիսում, Հոկայդո կղզու հարավ-արեւելյան ափամերձ գոտում, տեղի է ունեցել 6.1 մագնիտուդով երկրաշարժ, որն զգացվել է ինչպես Հոկայդոյի հարավային, այնպես էլ Հոնսյու կղզու հյուսիսային արեֆեկտուրաներում: Հայտարարված ցունամիի վտանգը թույլ էր անց հեղքվել է: Նոյեմբերի 28-ին Պապուա-Նոր Գվինեայի Նոր Իռլանդիա կղզու շրջանում գրանցվել է սեյսմիկ իրադարձություն, որն ունեցել է 6.4 մագնիտուդ: Հաջորդ օրը 6.0 մագնիտուդով երկրաշարժի էպիկենտրոնային գոտին գտնվում է Ֆիլիպինների ափերի մոտ՝ մայրաքաղաք Մանիլայից 230 կմ հյուսիս-արեւմուտք: Երկրաշարժերի հետեւանքով զոհեր, ավերածություններ չկան:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում դեկտեմբերի 2-ից 6-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին հյուսիս-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 3-ի գիշերը կբարձրանա 2-3 աստիճանով, 4-ի գիշերը՝ նույնքանով կնվազի: Դեկտեմբերի 4-ից 6-ը ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա 5-6 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 2-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -14... -19, Տավուշում՝ -4... -9, Լոռիում՝ -10... -15, Արագածոտնի նախալեռներում՝ -5... -9, Արարատյան դաշտում՝ -6... -9, Սյունիքի հովիտներում՝ -1... -4, Սյունիքի նախալեռներում՝ -5... -10, Ար-

ցախում՝ -3... -6 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 2-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ -1... -6, Տավուշում՝ +3... +8, Լոռիում՝ +2... +5, Արագածոտնի նախալեռներում՝ +1... +4, Արարատյան դաշտում՝ +3... +6, Սյունիքի հովիտներում՝ +6... +11, Սյունիքի նախալեռներում՝ 0... +5, Արցախում՝ +3... +6 աստիճանի սահմաններում:

Երեւանում դեկտեմբերի 2-6-ը սպասվում է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 2-ի գիշերը կտատանվի -7... -9, ցերեկը՝ +3... +5 աստիճանի սահմաններում:

Արդակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

Նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 1-ը

Հրդեհներ

Նոյեմբերի 28-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտ քաղաքի Ա. Գրաշի փողոցի տարածքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է չոր խոտ:

Նոյեմբերի 30-ին հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Բերքածոր գյուղի տարածքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է 1.5 հա չոր խոտ:

Դժբախտ պատահար

Նոյեմբերի 24-ին Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղում «Բեյգ Մեթըլս» ՓԲԸ տարածքում տեխնիկական սարքի պայթյունի հետեւանքով մահացել է ընկերության աշխատող՝ Գ. Լոռու մարզի բնակիչ (1962 թ. ծնված) Ա. Աղիկյանը:

ԼՂՀ փրկարար ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ելիտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Սոցիալական գովազդը՝ հանրային իրազեկման արդյունավետ գործիք նաեւ արտակարգ իրավիճակներում


ՀՀ գովազդի մասին օրենքն ընդունվել է 1996 թվականի ապրիլի 30-ին: Հոդված 13-ը սոցիալական գովազդին է վերաբերում, ըստ որի՝

1. Գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության եւ առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող եւ առեւտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ տրամադրել գովազդին հատկացվող տարեկան եթերային ժամանակի (տպագրական մակերեսի) ոչ պակաս, քան 5 տոկոսը:
2. Սոցիալական գովազդի տեղաբաշխման պատվերները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ ոչ պետական կազմակերպությունների կողմից:
3. Սոցիալական գովազդի արտադրության եւ տեղաբաշխման ծախսերը կատարվում են գովազդատուի միջոցների հաշվին:

Անվտանգությունը գազի տնտեսությունում, մասնավորապես՝ ներտնային գազասպառման համակարգերում, կարելու է հիմնախնդիր է, որը հուզում է ինչպես հանրությանը, այնպես էլ երկրի իշխանություններին: Եներգետիկայի եւ հանրային այլ ծառայությունների բնագավառում պետական քաղաքականության առաջնային սկզբունքը մրցակցության խթանման ու մրցակցային միջավայրի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Կարծում ենք, որ այս խնդրի լուծմանը զուգահեռ, երբ բնագավառը կրառնա հանրության համար ավելի թափանցիկ, իսկ պետության համար՝ ավելի հեշտ վերահսկելի, գործուն մեխանիզմներ կստեղծվեն՝ առավելագույնս ապահովելու վերոնշյալ քաղաքականության այնպիսի կարելուորագույն սկզբունքը, ինչպիսին էներգետիկայի եւ հանրային այլ ծառայությունների բնագավառի անվտանգությունն է: Այդպիսի մեխանիզմ կարող են լինել սպառողների իրազեկումը եւ գովազդը:

Ներկայացնում ենք շատ կարելու մի հարց, որը վերաբերում է արտակարգ իրավիճակների, կենցաղային պատահարների, տեխնոլոգիական վթարների ժամանակ քաղաքացիների իրազեկման ընթացքի բարձրացմանը եւ դրանով՝ աղետների դեմ պայքարին:

Ստորեւ ներկայացվում է ՀՀ Արտակարգ իրավիճակների վարչության վերլուծությունից մի հատված, որը վերաբերում է միայն սոցիալ-կենցաղային բնույթի աղետներին:



Գրաֆիկից հստակ երևում է, որ տարեցտարի ավելանում է սոցիալ-կենցաղային բնույթի արտակարգ իրավիճակների քանակը: Տեխնոլոգիական վթարների եւ աղետների վերլուծությունն ու զննահատումը վկայում են այն մասին, որ բնակչության իրազեկման հարցն անվտանգության, այդ թվում՝ նաեւ գազամատակարարման եւ գազասպառման համակարգերի խնդիրների վերաբերյալ, հրատապ է եւ պահանջում է հատուկ ուշադրություն: Տեղին է հիշատակել Արտակարգ իրավիճակների նախարարության «**Ով իրազեկված է, նա պաշտպանված է**» կարգախոսը:

Հաշվի առնելով, որ Հայաստանում գործում են բազմաթիվ հեռուստաընկերություններ, մարզային հեռուստալիքներ, ռադիոկայաններ, տպագիր մամուլ, էլեկտրոնային կայքեր, որոնք գովազդում են առեւտրային, խաղարկության եւ այլ ոլորտների գործունեությունը, առաջարկում ենք մեզ գովազդի համար տրամադրել մի քանի անվճար ռոպե: Խնդրի հրատապությունը պահանջում է նաեւ հաշվի առնել գովազդի տարածումը սոցիալական ցանցերով, տպագիր մամուլի տեղեկատվական կայքերով, ինչպես նաեւ «Բիլայնի», «Օրանժի», «Վիվա-Սել USU-ի»

SMS հաղորդագրություններով: Հատուկ ուշադրության է արժանի նաեւ հեռահաղորդակցության օպերատորների միջոցով գովազդի տարածման խնդիրն օրենսդրորեն սահմանելը: Կարծում ենք, որ սոցիալական գովազդի տարածման հնարավորություն պետք է ստեղծել փողոցային գովազդային վահանակների միջոցով, հանրային տրանսպորտում, մետրոյում, ինչպես նաեւ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել բազմաբնակարան շենքերում սոցիալական գովազդի տեղաբաշխման խնդիրը:

Այս ամենի արդյունքում որոշակի օրենքների փոփոխությունների անհրաժեշտություն կառաջանա: Հարցը վերաբերում է ՀՀ-ում գործող էլեկտրոնային, տպագիր եւ գովազդային այլ միջոցներով մարդու սահմանադրական իրավունքներին եւ պարտականություններին, առողջապահական եւ սոցիալական պաշտպանությանը, բարեգործությանն ու կամավորությանը, բնության պահպանությանը, հայեցի եւ հայրենասիրական դաստիարակությանը, մշակույթային արժեքների պահպանմանը, հասարակական անվտանգությանը, պետական եւ ազգային շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության եւ հասարակական նախաձեռնությունների իրազեկման կարելուորագույն միջոցներից մեկի պարբերական ներկայացմանը: Այդպիսի ներկայացման ձև կարող է լինել սոցիալական գովազդը, որը, ի տարբերություն առեւտրային գովազդի, շահույթ չի հետապնդում:

Սոցիալական գովազդը լուծում է երկու հիմնական խնդիր. նախ հնարավորություն է տալիս վեր հանելու հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներ եւ առաջարկել դրանց լուծումները, ինչպես նաեւ հանրությանը ներկայացնել սոցիալական ուղղվածության պետական քաղաքականությունը:

Սովորաբար սոցիալական գովազդի պատվիրատու լինում են պետական կառույցները, երբեմն՝ ոչ պետական կամ հասարակական կազմակերպությունները: Սոցիալական գովազդն օգնում է մարդկանց հարաբերություններ ձևավորել արտաքին միջավայրի հետ՝ կարողանալու համար ճիշտ որոշումներ կայացնել արտակարգ իրավիճակների դեպքում: Սոցիալական գովազդի պատրաստման, տարածման եւ զարգացման գործում պետությունը շահագրգիռ է, քանի որ այն հնարավորություն է տալիս իրականացնելու պետական ռազմավարական նշանակության խնդիրներ:

Ստեղծված կարելուորագույն խնդրի լուծման իրենց ջանքերն ուղղեցին ՀՀ-ում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում իրականացնող «Էյ-Ի-Ջի ՍԵՐՎԻՍ» ընկերությունը եւ մի շարք շահագրգռված հասարակական կազմակերպություններ՝ «Սպառողների ազգային ասոցիացիան», «Համատիրությունների նախագահների ասոցիացիան», «Սպառողների ասոցիացիան», «Սպառողների իրավունքների պաշտպանությունը», «Բնակարանային կոմունալ աշխատողներ

ի միությունը», եւ որոշեցին հետամուտ լինել բարձրացված կարելուորագույն խնդրի լուծմանը: Սկզբնական փուլում «Հասարակական պաշտպանների միություն» ԻԱՄ եւ «Էյ-Ի-Ջի ՍԵՐՎԻՍ» ընկերության միջեւ ձեռք բերվեց պայմանավորվածություն ուսումնասիրելու առկա խնդիրը եւ ձեւակերպելու խնդրի լուծման ճանապարհները:

Ներկայացնենք նաեւ բարձրացված խնդրի կապակցությամբ միջազգային փորձը:

Օրինակ՝ ԱՄՆ-ում սոցիալական գովազդն իրականացվում է «Գովազդային խորհուրդ» հասարակական կազմակերպության միջոցով: Այն միակ համակարգողն է եւ իրականացնում է սոցիալական գովազդի պատվերի ձեւավորման, արտադրության եւ տարածման աշխատանքներ: «Գովազդային խորհուրդ» գնահատմամբ՝ 2000 թ. խորհուրդն տրված հեռուստատեսային անվճար եթերի ամբողջ ծավալը կազմել է մոտավորապես 316 մլն դոլար, որը կազմում է ամբողջ գովազդային ծավալի 6 տոկոսը:

ԱՄՆ-ում միայն CBS-ը տարեկան ցուցադրում է 3000 սոցիալական սյուժե: Դրանց արդյունավետությունը գնահատվում է հետազոտությունների իրականացման արդյունքում: Այդ նույն տարում տեղական ՋԼՄ-ները սոցիալական գովազդին տրամադրել են 5.6 միլիարդ դոլար, որից 1.8 միլիարդը՝ հեռուստատեսությունները:

Մեծ Բրիտանիայում կառավարության առընթեր գործում է «Տեղեկատվության կենտրոնական գրասենյակը», որը սոցիալական գովազդի միակ պատվիրատուն է եւ իրականացնում է կառավարության, տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկված պատվերների ընդունումն ու բաշխումը տարբեր գովազդային գործակալությունների միջեւ:

Գերմանիայում արտաքին գովազդի 70 տոկոսը կազմում է սոցիալական գովազդը:

Ռուսաստանում, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի, գոյություն չունի մեկ միասնական մարմին, որը զբաղվում է սոցիալական գովազդի հարցերով: Միեւնույն ժամանակ, այն կարծես պարտադրանք է: 2006 թ. սոցիալական գովազդի ոլորտում ծախսվել է 20 մլն դոլար՝ գովազդային շուկայի ընդհանուր 2 մլրդ դոլար ծավալի մեջ, ինչը կազմում է 1%:


Բելառուսում եւ Ուկրաինայում սոցիալական գովազդի պատրաստումը հիմնականում ֆինանսավորվում է պետական կամ տեղական բյուջեներից: Ընդ որում, գովազդ տարածողները պարտավոր են գովազդի համար իրենց հատկացված ծավալի առնվազն 5 տոկոսն անվճար կամ մասնակի վճարով տրամադրել սոցիալական գովազդին:

Հայաստանում առկա էլեկտրոնային եւ տպագիր մամուլով բնակչության իրազեկման եւ գովազդային տեղեկատվության ֆինանսական վիճակը պարզելու համար դիմեցինք քաղաքային եւ մարզային էլեկտրոնային ու տպագիր ՋԼՄ-ներին:

Հանրապետությունում գործող իրական դաշտի ուսումնասիրությունը եւ վերլուծությունը թույլ տվեցին եզրակացնել, որ ֆինանսապես այնքան էլ դյուրին չէ կամ, որ նույն է, համարյա անհնարին է, սպառողների անվտանգության վերաբերյալ գովազդի տարածումը: Իսկ սոցիալական գովազդի մասին խոսելն ընդհանրապես տեղին չէ, որովհետեւ, նախ գովազդի պատրաստումը եւ տեղաբաշխումը, ըստ օրենսդրության, իրականացվում է վճարովի հիմունքներով, երկրորդ՝ այդ վճարներն անհամեմատ բարձր են: Եթե սոցիալական գովազդի պարագայում գոնե գովազդի տեղաբաշխումը նախատեսվում է

անվճար, ապա մեր իրականությունում այն վճարովի է, այն էլ՝ շատ թանկ:

Տեսեք՝ ինչ է ստացվում: Բնակչության անվտանգությունն ապահովող կազմակերպությունը գազի անվտանգության վերաբերյալ, օրինակ, այսպիսի գովազդ է պատրաստում.



Հայաստանի Հանրապետության արածեղում եղանակային լուծումների փոփոխության եւ օրի ջերմաստիճանի նվազելու դրանով զգալիորեն բարձրացել է կենցաղային գազի սարքավորումների ծանրաբեռնվածությունը: Ձեռուցման սեզոնի նախօրյակին գազի անվտանգ օգտագործման նկատմամբ ուշադրությունը բարձրացնելու, ինչպես նաեւ կենցաղում զազոզագործման ժամանակ դժբախտ դատախազները կանխելու նպատակով, «Էյ-Ի-Ջի ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունը հիշեցնում է գազ սպառողներին, որ գազի սարքի օգտագործման ժամանակ անհրաժեշտ է անձեղորեն դիտարկել անվտանգության կանոնները:

- Դրանք են՝**
1. Սուրճել ֆաբի առկայությունը ծխաօդասար ուղիներում: Քաբի բացակայության կամ թույլ ֆաբի դեղումը չօգտագործել գազի սարքավորումները, դա չափազանց վտանգավոր է կյանքի եւ առողջության համար: Գազի հեծագա օգտագործումը հնարավոր է միայն ծխելույզները եւ օդափոխիչ ուղիները համադասարակ ծառայությունների կողմից սուրճելուց եւ մաքրելուց հետո:
 2. Չօգտվել գազի ջերմոցման եւ ջրասափացուցիչ սարքից ուժեղ ֆանու ժամանակ:
 3. Չի թույլատրվում տեղակայել հարկադիր արտաբաբիչ օդափոխության համակարգեր այն շինություններում, որտեղ առկա են բաց այրման հոսով գազի սարքավորումներ:
 4. Չօգտվել գազի սարքավորումներից, եթե անվտանգության ազդանշանային համակարգն անսարք է:
 5. Առանց հսկողության չթողնել գազի միացած սարքավորումները:
 6. Չանջատել այրվող գազի ազդանշանից սարքը եւ վթարային անջատիչ կափույրները:
 7. Քնի եւ հանգստի համար չօգտագործել այն շինությունները, որտեղ տեղադրված են գազի սարքավորումներ:
 8. Խստրեն արգելվում է >>>



Երեխաների համար

Կենսապահովման հիմունքներ

Արտակարգ իրավիճակների հանրագիտարան կամ անվտանգության դպրոց

Սկիզբը նախորդ համարում

Տան վրանգները

Ի՞նչը կարող է տանը վտանգավոր լինել... Որքան էլ տարօրինակ թվա՝ հատկապես տանն է պատահում դժբախտ դեպքերի մեծ մասը: Հենց բնակարաններում են մեզ դարանակալում տարբեր «թակարդներ», որոնց աշխարհում ամեն օր զոհ են դառնում տասնյակ հազարավոր մարդիկ: Աշխատիր չլինել նրանցից մեկը:

Ղեկորայք եւ կենցաղային քիմիա

Երեկայումս քիմիական արդյունաբերությունն արտադրում է կենցաղային տարբեր միջոցներ. լվացքի, ամանեղեն լվանալու, ախտահանիչ եւ կեղտաթոր մաքրող, հատակի եւ կահույքի, մեքենաների եւ մոտոցիկլետների խնամքի, միջատների եւ կրծողների դեմ պայքարի միջոցներ, քիմիկատներ, որոնցով բուժում են ծառերն ու բույսերը: Եթե այս բոլորը ճիշտ են օգտագործվում, ապա ամեն ինչ անվտանգ է: Բայց փոքրիկ անգուշություն՝ եւ դրանք կարող են դառնալ շատ վտանգավոր:

Որո՞նք են դրանց անվտանգ օգտագործման հիմնական կանոնները:

Կենցաղային քիմիայի բոլոր միջոցները պետք է կիրառել միայն այնպես եւ այնպիսի նպատակների համար, ինչպես ցուցված է փաթեթավորման կամ տուփի պիտակի վրա:

Չի կարելի խաղալ տանը գտնվող դեղորայքի եւ կենցաղային քիմիայի (լվացքի փոշիներ, աման լվանալու, միջատասպան, ժավել եւ այլ միջոցներ) տուփերով ու տարաներով:

Եթե նույնիսկ հիվանդ ես, չի՛ կարելի ինքնուրույն դեղորայք ընդունել: Դա կարելի է անել միայն ծնողների ինքնուրույն քննարկումով:

Չի կարելի բացել աերոզոլի բալոնները, դրանք կարող են պայթել կամ նյութի մնացորդը կարող է լցվել աչքերը:

Նույնիսկ աերոզոլային դատարկ բալոններով չի կարելի խաղալ:

Աերոզոլային բալոնները չի՛ կարելի պահել գազօջախի, էլեկտրական սալիկների, ջեռուցիչ սարքերի մոտ:

Չի՛ կարելի ծնողներին պետք է զգուշացնել, որ աերոզոլային բալոններով աշխատելիս չի՛ կարելի ծխել:

Չի կարելի սննդամթերքը պահել կենցաղային քիմիական նյութ պարունակած շշերում կամ այլ տարաներում, որքան էլ դրանք լավ լվացված լինեն:

Չի կարելի համտեսել տանը գտնվող դեղորայքը, եթե նույնիսկ տեսել ես, թե ինչպես են այն օգտագործում մեծահասակները:

Չի՛ կարելի մեծահասակներին պետք է

զգուշացնել, որ տարաբնույթ նյութեր պարունակող յուրաքանչյուր տարա իր վրա պետք է ունենա լավ ընթեռնելի պիտակ:

Չի կարելի բաց անել անհայտ նյութ պարունակող շշերը, հոտ քաշել, համտեսել կամ թափահարել, քանի որ նյութի նույնիսկ չնչին քանակությունը կարող է թունավորման պատճառ դառնալ կամ այրվածքներ առաջացնել:

Չի՛ կարելի եւ մեծահասակներին հիշեցրո՞ւ. լվացող հեղուկները եւ թունավոր այլ նյութեր չի՛ կարելի պահել հյուսիքի, հանքային, սպիրտային խմիչքների դատարկված տարաներում (շշերում):

Մի՛ դիր դրանք խոհանոցի պահարաններում եւ այն դարակներին, որտեղ կա սնդամթերք. դրանց համար հատուկ տեղ առանձնացրու:

Ինչ՞ անել, երբ թունավորվել ես կենցաղային քիմիական որեւէ նյութով:

Ամենահասարակ եւ մատչելի ձեւը սովորական խմելու ջուրն է, որը գոլ վիճակում պետք է մեծ քանակությամբ խմեցնել, եւ այնուհետեւ մատուցված գոլի պոչով լեզվի արմատը սեղմելով՝ փսխում առաջացնել: Դրանից հետո կարելի է ուտեցնել կարտոֆիլի պյուրե կամ հում ձիւ սպիտակուց, անհապաղ բժիշկ կանչել:

Եթե տուժածը գիտակցությունը կորցրել է, նրան պետք է շրջել երեսնիվայր, գլուխը պետք է լինի ավելի ցածր, քան իրանի կոնքազդրային հատվածը: Շտապ բժիշկ կանչեք:

Գազ

Տանը գազ ունենալն անհրաժեշտություն է, սակայն այն կարող է նաեւ վտանգավոր լինել, եթե արտահոսք կա:

Ամենաուրախ ու անձայն լինելու պատճառով գազը կարող է աննկատ կուտակվել տանը եւ պայթել կամ թունավորման պատճառ դառնալ:

Տարբեր գազեր կարող են խեղդվելու, թունավորման են պայթյունի պատճառ դառնալ: Ամենամեծ վտանգը մեկ անհոտ, անհամ եւ աչքերը չզգոշող շմու գազն է: Այն առաջանում է գազօջախի անսարքության պատճառով, իսկ Հայաստանում նման դեպքեր հաճախակի են լինում, հատկապես ձմռանը՝ վառարանների օգտագործման ժամանակ, երբ թերայրույնից առաջանում է շմու գազ:

Գազից թունավորումների ժամանակ չստիպելով տուժածին ինքնուրույն գնալ, անհրաժեշտ է նրան դուրս բերել լավ օդափոխված տեղանք: Արժակել նրա հագուստը (օձիք, փողկապ, գոտի) եւ փաթաթել ծածկոցով, որպեսզի չմրսի, որից հետո անհապաղ բժիշկ կանչել:

Չի՛ կարելի չի՛ կարելի գազից թունավորվածին տալ ալկոհոլային խմիչք:

Գազը, բացի թունավորում եւ պայթյուն առաջացնելը, կարող է նաեւ տանը հրդեհի պատճառ լինել: Ուստի, եթե գազի հոտ ես զգում, ապա չի կարելի լուցկի կամ կրակվառիչ վառել, միացնել լույսը կամ էլեկտ-

րական այլ սարքավորում, օգտվել գազօջախից:

Գազի հոտ առնելիս անհրաժեշտ է.

- այդ մասին շտապ հայտնել մեծահասակներին.
- բացել բոլոր պատուհանները եւ օդափոխել սենյակը.
- ստուգել գազօջախի փականները, եթե բաց են, ապա փակել դրանք.
- անմիջապես զանգահարել 1-04: Ձանգահարել հարեւանի տնից, քանի որ, եթե բնակարանը լցված է գազով, ապա ձեր հեռախոսից օգտվելիս կարող է հեռախոսի ապարատում կայծ առաջանալ, եւ տեղի կունենա պայթյուն:

Ինչի՞ վրա է հարկավոր ուշադրությունը դարձնել:

Հայաստանում, բացի գազի կենտրոնացված մատակարարումից, օգտագործ-



վում են նաեւ գազի բալոններ. շատ կարեւոր է իմանալ.

- գազի բալոնը պետք է գտնվի լավ օդափոխվող տարածքում.
- այն պետք է գլխիվայր կամ թեքված չլինի.
- բալոնները չի կարելի թաղել հողում կամ իջեցնել նկուղ, երկրի մակերեսային ցածր.
- չի՛ կարելի գազի բալոնը փոխել, եթե հարեւանությամբ կա էլեկտրական սարք, կամ կրակ է վառվում:

Հետաքրքիր է իմանալ.

Բալոնների գազն ունի դեպի ներքեւ տարածվելու ունակություն, քանի որ գազը երկուսուկես անգամ ծանր է օդից:

Ե՞րբ կարող է լինել գազի արտահոսք.

- երբ բաց պատուհանից փչող քամին մարում է գազօջախի կրակը, որի վրա ճաշ է եփվում.
- երբ թեյամանի ջուրը կամ կաթսայի ապուրը թափվում եւ մարում է կրակը.
- երբ ճաշ է առաջանում գազի խողովակներում:

Չի կարելի օգտվել գազօջախից, եթե մե՞նակ ես (առանց մեծահասակների):

Եթե ուզում ես բացել խոհանոցի պատուհանը, ապա ուշադրություն դարձրու՝ չկա՞ արդյոք միջանցիկ քամի, քանի որ այն կարող է մարել գազօջախի կրակը, եւ գազը կտարածվի խոհանոցում:

Թշամանը գազօջախին մի թող ու հեռանա: Եթե այն չափից ավելի լիքն է, ապա

եռալով կարող է թափվել եւ մարել կրակը: Մինչ գազօջախը վառելը ստուգիր, արդյո՞ք բոլոր փականներն են փակ:

Գազօջախի փականը պետք է բացել միայն այն ժամանակ, երբ լուցկին վառված է:

Եթե գազօջախը վառելիս լուցկին հանկարծակի հանգչում է, ապա պետք է փակել փականը եւ քիչ հետո կրկին փորձել այն վառել:

Երեխաները չպետք է կախվեն գազի խողովակներից եւ ճոճվեն:

Չի՛ կարելի, եթե սենյակում գազի արտահոսք կա, նույնիսկ սառնարանի ինքնաշխատ միացումը կարող է բավական լինել, որ պայթյուն առաջանա:

Ամեն երեկո, քնելուց առաջ պետք է անպայման փակել գազը:

Աստիճանների բազրիք (ծաղաշարք)

Չի կարելի սահելով իջնել աստիճանների բազրիքի (ծաղաշարքի) վրայով, եթե չես ուզում ձեռքերի, ոտքերի կամ գլխի կոտրվածքներ ստանալ:

Եղիր աշխույժ, խիզախ ու քաջ, բայց ոչ անխելք

Թափփված բնակարան

Կարգուկանոն ամենուր է հարկավոր: Ինչքան ոտքեր են վնասվել հատակին ընկած դատարկ շշերի պատճառով, ինչքան կոտրվածքներ խոհանոցի հատակին թափված են չմաքրած կարտոֆիլի, բանանի կամ այլ մթերքի կեղևների ու մնացորդների հետևանքով:

Ժամանակակից տներում լաքապատ հատակները, անկայուն աթոռներն ու աթոռակները, շարժական տնային աստիճանները, հատակի վրա սահող գորգերն ու կարպետները հաճախ են հանգեցնում դժբախտ պատահարների, իսկ հիմնական պատճառը՝ անուշադրությունն է: Որպեսզի խուսափեք դժբախտ պատահարներից պետք է.

- ուշադրություն դարձնել աթոռների, տնային աստիճանների, աթոռակների կայունությանը.
- հատակին թողնել խաղալիքներ կամ այլ առարկաներ.
- միշտ նայել ոտքերի տակ, հատակին թափված կեղևների ու մնացորդների (վարունգի, կարտոֆիլի, ձմերուկի, բանանի եւ այլն) պատճառով չսայթաքելու համար.
- անհապաղ արբել հատակին թափված ցանկացած հեղուկ.
- հետեւել, որ բոլոր գորգերն ու կարպետները հատակին ամրացված լինեն մեխերով կամ կպչուն ժապավեններով.
- զգույշ լինել, երբ տնային շարժական աստիճաններով բարձրացել եք՝ լուսամփոփ կամ պատուհան մաքրելու, սարդոստայնները առաստաղից վերացնելու կամ բարձր դարակներից որեւէ իր վերցնելու.
- աստիճանով իջնելիս կամ բարձրանալիս ձեր դիմաց մի՛ պահեք մեծ փաթեթեր կամ արկղեր, որոնց պատճառով ձեր տեսադաշտը կփակվի, եւ դուք չեք տեսնի աստիճանը:

Խնթաղության կողմից

Չողվածում շոշափված է շատ կարեւոր խնդիր, որի լուծումը գտնվում է ՀՀ Կառավարության եւ Ազգային ժողովի իրավասության շրջանակում: Բարձրացված խնդրով շահագրգռված են այնպիսի պետական կառավարման կառույցներ, ինչպիսիք են Ոստիկանությունը, Էներգետիկայի, Տրանսպորտի, Առողջապահության, Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների նախարարությունները եւ այլն: Պահանջվում է նրանց գործողությունների համաձայնեցում: Ո՞վ կլինի նախաձեռնողը: Գուցե ՀՀ Կառավարությունը կամ ՀՀ Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովներից որեւէ մե՞կը:

>>> գազօջախն օգտագործել շինությունը սահմանափակում համար:

9. Չփակել օդափոխիչ ուղիների մուտքը, աղահոսվել այն շինությունների մեծական եւ հուսալի օդափոխությունը, որտեղ տեղադրված են գազի սարքավորումներ:

10. Յուրաքանչյուր անգամ գազի սարքավորումը օգտագործելուց հետո դարձադիր փակել ծորակները եւ փականները:

Գազի հոտ զգալու դեպքում անհապաղ դադարեցնել գազի սարքավորումների օգտագործումը, փակել բոլոր ծորակներն ու փականները, բացել դատարանները՝ շինությունն օդափոխելու համար, եւ դիմել

գազի վթարային ծառայությանը՝ 1-04 հեռախոսահամարով:

Այս աշխարհի գովազդն, օրինակ, կազմակերպությունը պետք է պատրաստի իր միջոցներով, նաեւ վճարի բավական մեծ գումար՝ ՁԼՍ-ներով այն տեղաբաշխելու համար:

Հասարակական կառույցների հետ քննարկումներից հետո եկանք այն եզրակացության, որ Կառավարությունը պետք է անդրադառնա այս խնդրին: Եթե գովազդատուն կարող է իր միջոցներով պատրաստել սոցիալական գովազդը, ապա դրա տեղաբաշխումը պետք է լինի անվճար: Մենք կարծում ենք, որ խնդրին կարելի է լուծում տալ օրենսդրական ճանա-

պարիով: Ուստի որոշեցինք դիմել ՀՀ Կառավարության եւ ՀՀ Ազգային ժողով գովազդի մասին օրենսդրության փոփոխության հարցով: Անգամ պատրաստել ենք համապատասխան օրենքի փոփոխության նախագիծը, որը եւս ուղարկել ենք Կառավարության եւ ԱԺ: Հուսանք, որ այս կարեւոր հարցի լուծումը գտնվում է իշխանությունների ուշադրության ներքո, եւ ակնկալենք խնդրի շուտափույթ լուծում:

Արամ Հայրապետյան
«Էյ-Ի-Ջի ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Արամ Գրիգորյան
Հասարակական պաշտպանների միություն



Դեկտեմբերը ցուրտ կլինի

Ամսվա կլիմայական բնութագիրը եւ կանխատեսումը

Դեկտեմբերին ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում կազմում է -3.9 °C: Բարձր լեռնային շրջաններում՝ 2000 մ եւ ավելի (Պաղակն, Եռաթմբեր), ջերմաստիճանի ամսական միջին արժեքները բավական ցածր են՝ -5... -11 °C: Չմռան ամենացուրտ ամիսը հունվարն է, սակայն ձմեռների 18-20% դեպքում ամենացուրտը եղել է դեկտեմբերը: Որպես կանոն, դեկտեմբերի ամենացածր ջերմաստիճանը դիտվում է ամսվա երրորդ տասնօրյակում, սակայն առանձին դեպքերում (1984 թ.) հյուսիս-արեւելյան շրջաններում այն դիտվել է առաջին տասնօրյակում (Օձուն, Բագրատաշեն): Առավել ցուրտ դեկտեմբերներ են դիտվել 1932, 1933, 1941, 1948, 1953, 1970, 1982, 1984, 1987, 2002 թթ., երբ օրական միջին ջերմաստիճանը նույնիսկ հովտային շրջաններում իջել է մինչեւ -14... -15 °C, իսկ բացարձակ նվազագույնը՝ 2002 թվականին հովտային շրջաններում հասել է -32 °C: Լեռնային շրջաններում ամենացածր ջերմաստիճանը հասել է -40 °C (Պաղակն) 1948 թ.:

բարձր լեռնային շրջաններում՝ 80-90 մմ: Ամենախոնավ դեկտեմբերները հանրապետությունում դիտվել են 1946, 1956, 1958, 1969, 1987, 2003 թթ.-ին, երբ տեղումների քանակը կազմել է ամսական նորմայի 200-300%-ը, ամենաչոր դեկտեմբերները դիտվել են 1911, 1947, 1961, 1980, 1995, 1999, 2004 թթ.-ին, երբ հանրապետության հովտային շրջաններում ընդհանրապես տեղումներ չեն գրանցվել:

Տեղումները հիմնականում դիտվում են ծայր տեսքով: Հանրապետության տաք շրջաններում դեկտեմբերի առաջին եւ երկրորդ տասնօրյակում կայուն ձնածածկ չի գոյանում:



Հիմնականում գերակշռում է անդորր եղանակը, քանի մեծ արագություններ դիտվում են լեռներում եւ լեռնանցքներում: Առավելագույն արագությունները հասնում են մինչեւ 18-20 մ/վրկ, պոռթկումները՝ 23 մ/վրկ:

Արեւափայլի տեղողությունը տարածքում միջինը կազմում է 116 ժամ: Դեկտեմբերը բնութագրվում է հաճախակի մառախուղներով: Մառախուղ առավել հաճախ դիտվում է Արարատյան դաշտում, Սյունիքում եւ Շիրակում:

Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -1... -3 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը մինչեւ 4... 6 °C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -10... -13 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -11... -14 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 10... 11 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ 15... 26 մմ): Առանձին օրերի սպասվում է մառախուղ:

Շիրակի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -6... -8 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչեւ +1... -3 °C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ -20... -25 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -15... -21 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 4... 8 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 18... 55 մմ): Առանձին օրերի սպասվում է մառախուղ:

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -2... -4 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչեւ 2... 6 °C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -15... -20 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -16... -20 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 11... 12 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ 19... 20 մմ): Լեռնանցքներում առանձին օրերի սպասվում է մառախուղ:

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -2... +1 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչեւ 3... 8 °C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -8... -13 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -9... -12 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 14... 17 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ 21... 23 մմ):

Վայոց Ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում -1... -3 °C, լեռնային շրջաններում՝ -6... -8 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչեւ 3... 5 °C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը ցածրադիր մասերում մինչեւ -10... -12 °C, բարձրադիր մասերում մինչեւ -8... -10 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -11... -13 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 10... 11 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ 25 մմ): Առանձին օրերի սպասվում է մառախուղ:

ջաններում՝ 0... -3 °C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ -10... -15 °C, լեռնային շրջաններում՝ -18... -23 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ -12... -13 °C, լեռնային շրջաններում՝ -17... -18 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ հովտային շրջաններում 10... 11 °C, լեռնային շրջաններում՝ 5... 6 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 28... 35 մմ, լեռնային շրջաններում 73 մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 0... 3 °C, լեռնային շրջաններում՝ -3... -5 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը հովտային շրջաններում մինչեւ՝ +5... 10 °C, լեռնային շրջաններում՝ 0... +3 °C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ՝ -7... -12 °C, լեռնային շրջաններում՝ -10... -15 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ -6... -10 °C, լեռնային շրջաններում՝ -13... -20 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ հովտային շրջաններում 15... 19 °C, լեռնային շրջաններում՝ 11... 14 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 15... 27 մմ, լեռնային շրջաններում 19... 54 մմ): Առանձին օրերի սպասվում է մառախուղ:

Երեւան

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -1... -3 °C, որը 1-3 աստիճանով ցածր է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը մինչեւ 3... 5 °C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը ցածրադիր մասերում մինչեւ -10... -12 °C, բարձրադիր մասերում մինչեւ -8... -10 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -11... -13 °C, միջին բացարձակ առավելագույնը՝ 10... 11 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է նորմային մոտ (նորման՝ 25 մմ): Առանձին օրերի սպասվում է մառախուղ:

Ես անհաջողակ եմ

Մեր մարդը որեւէ հարցում անհաջողություն է կրում, ապա նա հակված է այդ «բեռը» տեղափոխել իր կյանքի յուրաքանչյուր իրավիճակ: Նա սկսում է համոզվել, որ ճակատագիրն իրեն չի սիրում: Իսկ նման մոտեցումն անկասկած ազդում է կյանքի բոլոր ոլորտներին վրա:

Նրանք հակված են թաքցնել, խուսափել մարդկանցից, իրենց ավելի հարմարավետ են զգում, երբ աննկատ են մնում: Նրանք ամեն ինչ անում են, որ ավելի մեթոդաբան եւ չզննահատված լինեն շրջապատի կողմից: Նրանց կյանքի իրադարձությունները անհաջողություններն են: Նրանք չեն կարողանում զննահատել եւ սիրել սեփական անձը, ինչն էլ անդրադառնում է հարաբերությունների եւ կյանքի մյուս ոլորտների վրա: Միշտ թերազնահատում են իրենց հնարավորությունները: Միակ դրական հատկությունը, որ նրանք զննահատում են իրենց մեջ, սթափ հայացքների տեր լինելն է: Այսօր մենք կանդորադառնանք դրան եւ մի քանի եղանակ կառաջարկենք այս խնդիրը հաղթահարելու համար:

1. Ես ոչինչ չարժեմ
Շատ հաճախ մեր ճակատագիրը որոշ-

վում է դեռահասության տարիքում, երբ մարդը փորձում է հասկանալ, թե ով է ինքը: Դեռահասն իրեն փնտրում է բոլոր «հայելիներում», եւ երբ մի հարցում թերահամ է, մտածում է, որ շրջապատն իրեն համարում է անհաջողակ: Եւ այդ մոտեցումները նպաստում են, որ անձի մեջ ձեւավորվի բացասական ինքնանայնալիանցում: Նրա կյանքի իմաստն է դառնում ապագանցել, որ ինքն այնպիսին է, ինչպիսին իրեն համարում է շրջապատը, այսինքն՝ անհաջողակ: Արդյունքում դեռահասը մեծանում է այդ պիտակն իր վրա փակցրած եւ անզան ջանքեր չի գործադրում այն փոխելու համար, որպեսզի մարդիկ կարողանան տեսնել իր իրական դեմքը, էությունը:

Նորից ձեռք բերել արժանապատվություն

Բազմաթիվ մարդիկ երիտասարդ տարիքներին թույլ են տվել շատ սխալներ, չեն կարողացել հանձնել քննությունը, գողություն են արել, վիրավորել են եւ այլն: Սակայն նրանց մեծամասնությունը մոռանում է այդ դեպքերը, քանի որ կարողացել է իրականանալ որպես անձ: Եթե դուք իրականում կարծում եք, թե ոչինչ չարժեք, ապա արեք այնպիսի մի բան, որը մինչ այդ չէք արել: Օրինակ՝ օգնեք անօթեան երեխաներին, ֆինանսական աջակցություն հատկացրեք մանկատներին, օգնեք այն մարդկանց, ովքեր ձեր կարիքն ունեն եւ այլն: Այդ մարդիկ կտան հնարավորություն, որ

դուք եւս մեկ անգամ զգաք, որ այնքան էլ «անպետք» մարդ չեք եւ կսկսեք հարգել ձեր անձը:

2. Ես անհաջողակ եմ

Երեխայի մեջ սեփական անձի նկատմամբ հարգանքի բացակայությունը կարող է առաջանալ նաեւ ծնողների ոչ նրբանկատ նկատողությունների, վիրավորանքների հետևանքով: Եթե ծնողը բազմիցս իր երեխային հավատացնում է, որ նա ոչնչի իր կյանքում չի հասնի, որ անհաջողակ է, ապա երեխան սկսում է հիշել եւ ուշադրություն դարձնել միայն այն անհաջողություններին, որոնք կատարվել են իր կյանքում: Երբ ինչ-որ բան սկսում է լավ ընթանալ կամ հաջողություններ են նկատվում, ապա նրանք տագնապի եւ խուճապի մեջ են ընկնում եւ կիսատ են թողնում սկսած գործը: Կարծես նոր անհաջողությունը բերում է հանգստություն եւ ապացուցում է սեփական անձի մասին ստեղծված համոզմունքը:

Ստեղծագործման թերապիա

Որպեսզի անձը կարողանա քանդել այդ անհաջողությունների կոմպարտմենտը, ապա պետք է գիտակցի, որ ծնողների կողմից տրված բնութագիրը սխալ է: Այդ համոզմունքն իր մեջ ամրապնդելու համար նա պետք է ռիսկի դիմի, եւ այնպիսի քայլերի գնա, որոնք կզննահատվեն ուրիշների կողմից: Կարելի է այս փուլում գրառել կյանքում տեղի

ունեցող բոլոր դրական փոփոխությունները:

3. Ինձ հնարավոր չէ սիրել


Նրանք դժգոհ են եւ միշտ ամեն տեղ ու ամեն ինչում փնտրում են բացասական կողմեր: Նրանք միշտ գոհ են, տանջվողներ: Նրանք իրենց անարժան են համարում սիրվելու համար, այդ իսկ պատճառով էլ նրանց երբեք չեն սիրում: Հաճախ նման մարդիկ նույն կերպ վերաբերվում են իրենց երեխաներին, այսինքն՝ ինձ չեն սիրել իմ ծնողները, ուստի ես էլ չեմ կարողանա սիրել իմ երեխաներին: Երջանկությունն ինձ համար չէ:

Սովորե՛ք գործել

Հիշե՛ք, մարդն ի վիճակի է տալ ուրիշներին այն, ինչ նա չի ստացել կամ չի զգացել: Նվիրել, ուրիշներին երջանկացնել, սիրել կարող է ցանկացած մարդ, այդպիսին է մարդու էությունը բնությունից տրված: Միզուցե՛ք ձեզ դժվար է հավատալ, որ կյանքը կարող է ձեզ էլ անակնկալներ եւ նվերներ պարգևել: Պարզապես փորձե՛ք հիշել եւ գրի առնել այն լավ իրադարձությունները, որոնք կատարվել են ձեզ հետ:

Ամեն Կարապետյան հոգեբան-խորհրդատու
Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. hogeban@emergency.am էլ. hogeban@emergency.am էլ. hogeban@emergency.am էլ.

Նոր տեխնոլոգիաներ



Սրույգ եւ հիմնավոր տեղեկատվական բազա ունենալու կարեւորությունը

Տեղեկատվությունն ու հաղորդակցու- մը ցանկացած աղետի արձագանքման փրկողակն է: Այն չափազանց կարեւոր է տեղում աշխատող մարդկանց համար՝ իրավիճակը վերահսկելիս, ինչպես նաեւ ծայրահեղ անհրաժեշտություն է առան- ձին տեղանքներում օգնություն եւ մատա- կարարում ապահովելիս: Այն օգնում է կազմակերպություններին համագործակ- ցել՝ խուսափելու համար կրկնակի ջան- քերից եւ օգնության բացերից:

Ճանաչումը համայնքը համայնքը վաղուց գիտի, որ տեղեկատվական եւ հա- ղորակցման տեխնոլոգիաները (ՏՀՏ) կա- ռող են շատ արագ համակարգել գործունե- ությունը, այդպիսով աշխատանքն առավել քիչախախտելու եւ արդյունավետ դարձնելով: ՏՀՏ-ի վերջին զարգացումները, ինչպես օրի- նակ Բջջային լայնաշերտ գլոբալ կապի (Broadband Global Area Network), WiMax-ի եւ WiFi-ի միավորող ցանցերը հնարավորու- թյուն են տալիս բարելավել տեղեկատվու- թյան փոխանակումը ոչ միայն կազմակեր- պությունների միջև, այլև՝ դրանց միջև:

Այս հոդվածը նկարագրում է համակարգ- ված կերպով ստույգ եւ հիմնավոր տեղե- կատվական բազա հավաքելու անհրաժեշ- տությունն աղետաշատ երկրներում՝ միջ- կազմակերպական եւ բազմափուլ մոտեց- մամբ:

Մարդասիրական սեկտորը հնարավորու- թյուն ունի օգտագործելու տեխնոլոգիական առաջընթացը՝ բարելավելու տեղեկատվու- թյան փոխանակումը ճգնաժամերի ժամա- նակ: Տեխնոլոգիան լուծում է, բայց այն շատ կարեւոր գործիք է՝ խելամիտ եւ անհա- պաղ որոշումներ կայացնելը խթանելու հա- մար:

Ճգնաժամային

տեղեկատվության կառավարումը

Խոշոր աղետների կամ ճգնաժամերի ար- ծագանքելիս ճգնաժամային տեղեկատվու- թյան կառավարման բազմաթիվ մարտահ- րավերներ են ի հայտ գալիս: Այդպիսիք են՝

- տների, ենթակառուցվածքների եւ ծա- ռայությունների վնասների գրանցումը,
- տեղահանված բնակչության ուղեկցու- մը
- մարդասիրական օգնության հսկայա- կան ներհոսքի բաշխումը
- խմբերի միջեւ եւ ներսում, ինչպես նաեւ տասնյակ կազմակերպությունների աշխա-

տանքների կարգավորումը

Հայիթիի ավերիչ երկրաշարժին արձա- գանքող կազմակերպությունների շրջանում անցկացված հետազոտությունը պարզել է, որ հիմնական խնդիրը, որին նրանք բախվել են, երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ ստույգ եւ հիմնավոր տեղեկատվության պա- կասն է եղել: ՄԱԿ-ի շատ խմբերի համար գրեթե մեկ ամիս է պահանջվել բազմակող- մանի տեղեկատվություն ստանալու, թե ինչ- պիսին է եղել իրավիճակը երկրաշարժից առաջ, որպեսզի հասկանան, թե ինչ հետե- անքներ է այն ունեցել:

Հայիթիում իրավիճակը հուսահատեցնող էր, որովհետեւ կառավարության գրեթե բոլոր գրասենյակներն ու նախարարություններն ավերվել էին, եւ նրանց տվյալների բազանե- ռը կորսված էին: Դա ամբողջ աշխարհում արձագանքող կազմակերպություններին հանդիպող հանընդհանուր խնդիր է:

Հիմնավոր եւ հետադեմային տեղեկատ- վությունը հավաքվում եւ վերահսկվում է ինքնավար շատ խմբերի կողմից՝ ներառյալ պետական կառավարման մարմինների ներ- կայացուցիչները, որոնցից շատերն առաջին անգամ են միասին աշխատում:

Հիմնական տվյալների բազայի միասնա- կան արխիվի բացակայության պատճառով կազմակերպությունները զգալի ժամանակ են ծախսում կամ տվյալները վերստեղծելու կամ դրանք նորից հավաքելու վրա:

Այդ իսկ պատճառով, շատ կարեւոր է հեշ- տացնել միջեւ աղետը, դրա ընթացքում կամ հետո հավաքված տվյալների հասանելիու- թյունը:

Հանկարծակի տեղի ունեցած աղետին մարդասիրական արձագանքումն ապահու- վելու համար անհրաժեշտ է.

- աղետի ենթարկված մարդկանց սիռ- վածությունը եւ առկա ռեսուրսների արագ գնահատում
 - աշխարհագրական ճշգրիտ տվյալներ՝ արձագանքման նախնական գործողություն- ները պլանավորելու համար
 - փոխանցվող տեղեկատվություն, թե որ կազմակերպությունը որտեղ է աշխատում, որպեսզի արձագանքումը համակարգված լինի եւ խուսափեն օգնության կուտակումնե- ռից եւ բացթողումներից
- Սա վերաբերում է մարդասիրական ցան- կացած արձագանքման: Սակայն հանկար- ծակի տեղի ունեցած աղետի ժամանակ տե- ղեկատվության պահանջարկը եւ տրամադր- անա ժամկետներն ավելի սեղմ են դառնում:

Հնարավոր է, որ նախօրոք հավաքված տե- ղեկատվական ռեսուրսները գոյություն չու- նեն: Նույնիսկ այնտեղ, որտեղ զարգաց- ման ծրագրեր են ներկայացվել ճգնաժամից առաջ, տվյալները հաճախ ցրված են եւ մար- դասիրական համայնքը տեղյակ չէ դրանց մասին կամ դրանք հասանելի չեն ու չեն կա- ռող արագ օգտագործվել:

Արտակարգ իրավիճակներից հետո մեծ թվով տեղեկատվական հարթակներ են ստեղծվում, ինչն, իհարկե, զովելի է: Այնուա- մենայնիվ, ավելացող տվյալների ահռելի թիվն էլ կարող է խնդիր ստեղծել: Որքան հնարավոր է շատ տեղեկատվություն վերահ- րապարակելու էնտուզիազմը կարող է հան- գեցնել շփոթմունքի եւ անճշտությունների, երբ օգտագործողները փնտրում են միե- նույն տեսքն ունեցող տվյալների մեջ՝ գտնե- լու նոր կամ տարբերվող:

Նշված խնդիրներին քաջատեղյակ են մարդասիրական արձագանքման տեղե-



կատվության կառավարողները: Բայց եւ այն- պես, այս խնդիրները նորից ու նորից ծագում են հանկարծակի տեղի ունեցած գրեթե բո- լոր արտակարգ իրավիճակների ժամանակ՝ եւ զարգացած, եւ զարգացող երկրներում:

Ճգնաժամը մեկ տեղում հավաքում է տե- ղական, ազգային եւ միջազգային մարդասի- րական ամենաբազմազան խմբերի: Նրան- ցից ոմանք փորձված մասնագետներ են, ոմանք էլ՝ ոչ: Ոմանք կառավարության հա- մար են աշխատում, ոմանք էլ պարզապես անհանգստացող քաղաքացիներ են: Սա- կայն, ցանկացած աղետի ժամանակ, հիմնա- կան խաղացողները մնում են նույնը՝ կառա- վարություն, ՄԱԿ-ի գործակալություններ, խոշոր ՀԿ-ներ, եւ նրանց տարբեր դերերը պատկերացնելով կարելի է կանխատեսել «մարդասիրական ծրագրի» հերթական սցե- նարը: Տվյալների հիմնավոր բազայի հա-

մընդհանուր խնդիրները կարող են եւ պետք է լուծվեն ամեն մի արտակարգ իրավիճակի համար: Օրինակ՝

• Աղետի առաջին օրերին հիմնական կարգավորող գործակալությունները համա- ծայնության են գալիս, թե ազգային կամ տե- ղական մակարդակով տվյալների որ բազան պետք է օգտագործվի: Շատ կարեւոր է, որ այդ որոշման մասին տեղյակ լինեն արձա- գանքման գործում ներգրավված բոլոր կող- մերը:

• Մարդասիրական գնահատման օրի- նակները կամ քարտեզագրված տվյալները պետք է ստանդարտացված լինեն եւ նույնա- կանացվեն:

• Տվյալների տրամադրումը պետք է հա- մընկնի տվյալ մարդասիրական արձագանք- ման տեղեկատվական պահանջներին: Առաջնահերթությունները տարբեր են լինում տարբեր արտակարգ իրավիճակների ժա- մանակ, եւ դա մշտական դժվարություններ է ստեղծում սահմանափակ ռեսուրսներն օգ- տագործելիս, երբ հրատապ տեղեկատվու- թյուն է անհրաժեշտ արձագանքման յուրա- քանչյուր փուլում:

• Այն տեղեկատվությունը, որն անհրա- ժեշտ է տուժած համայնքին, պարտադիր չէ, որ պահանջված լինի մարդասիրական գոր- ծակալության կողմից:

Լավ կառավարվող մարդասիրական ար- ծագանքն օգտագործում է տվյալների բազ- մազան բազաներ, որոնք ստեղծվել են տար- բեր գործակալությունների կողմից եւ նկա- րագրում են շատ դիմամիկ եւ արագ փոփոխ- վող իրավիճակը: Այդ բազաները հեշտ օգ- տագործելի դարձնելը վերադիր ծախսեր է պահանջում, բայց աղետի ժամանակ այդ ծախսերն արդարացվում են:

Հարձվելով առաջ

Հիմնավոր տեղեկատվական բազայի եւ ճգնաժամային տեղեկատվության հասանե- լիությունն ապահովելու համար անհրաժեշտ է միավորել բոլոր գործակալությունների ջանքերը: Դրան պետք է նպաստի մարդասի- րական արձագանք իրականացնող ամբողջ հանրությունը՝ ներգրավելով էլ աջակցելով մասնավոր եւ ակադեմիական սեկտորներին:

Զիսիլի Օլաֆսոն

«ՆեթՀոուփ» (NetHope)

կազմակերպություն

Արտակարգ իրավիճակների

արձագանքման տնօրեն

Եվրոպայում վարակներ են փարածվում, որոնց առաջ հակաբիոտիկներն անզոր են

Մասնագետները զգուշացնում են՝ առ- կա է անբուժելի ինֆեկցիոն հիվանդու- թյունների տարածման ռիսկ անբուժակա- յելի ծավալներով, գրում է «Խնդիրներն- դանքը»:

Պատճառը «սուպերբակտերիաների» թվի աճն է, որոնց վրա ոչ մի հակաբիոտիկ չի ազդում: Դրան գումարվում է նաեւ նոր դե- ղամիջոցների մշակման հանդեպ հետաքրք- րության պակասը: Ինչպես հայտնել է Պրո- ֆիլակտիկայի եւ էպիդեմիոլոգիական վե- րահսկման եվրոպական կենտրոնը (ECDC), որոշ երկրներում K.pneumoniae բակտերիա- յով արյան վարակման դեպքերի մինչեւ 50 տոկոսը հնարավոր չի լինում բուժել կարբա- պենեմազներով՝ ամենաուժեղ հակաբիո- տիկներով: Մինչդեռ K.pneumoniae՝ թոքա- բորբի բացիլը, ինչ-որ էկզոտիկ բակտերիա չէ, այլ շնչառական համակարգի եւ միզուղի- ների բորբոքումների հարուցիչ, որն առկա է ստամոքսում եւ փոխանցվում է կեղտոտ իրերին դիպելիս:

Եվրոպայում բակտերիայի այս տեսակով

վարակումը 7-ից հասել է 15 տոկոսի: Դա հատկապես մտահոգիչ է, քանի որ հակաբի- ոտիկների այս տեսակն այլ դեղերի հանդեպ կայուն վարակների բուժման ամենածայրա- հեղ միջոցն է: Այդպիսի դեպքեր են գրանցվել Հունաստանում, Իտալիայում, Ավստրիա- յում, Հունգարիայում եւ Կիպրոսում:

2010 թվականին աճեց նաեւ ստամոքսի ցուպիկի հակաբիոտիկների հանդեպ կայուն շտամների թիվը: Իտալիայում եւ Իսպանիա- յում վարակների դեպքերի 25-50 տոկոսը չհաջողվեց բուժել ֆլուորոկինոլոնով: Մեծ Բրիտանիայում բակտերիաների 70 կրիչ է հայտնաբերվել, որոնք պարունակում են այսպես կոչված NDM-1 էնզիմ, որը քայքա- յում է հակաբիոտիկը: Մեկ այլ հետազոտու- թյուն ցույց է տվել, որ Հնդկաստանից վերա- դարձող ճանապարհորդների ավելի քան 80 տոկոսն իրենց ստամոքսում բերում են NDM գենը:

Գիտնականները զգուշացնում են՝ եթե NDM-1 սինթեզը գործի դնող գենն ավելի լայն տարածում ունենա, իրադարձությու- ները սարսափելի ընթացք կստանան:

Հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի Առող- քապահության վաչությունն զգուշացրեց բժիշկներին, որ գոնորեան պետք է բուժել միաժամանակ երկու դեղամիջոցներով, իսկ մեկ տարածված դեղից պետք է հրաժարվել,

քանի որ այն կորցրել է արդյունավետությու- նը: Գերատեսչության ներկայացուցիչները հայտնել են, որ անբուժելի գոնորեայի սպառնալիքն ապագայում շատ իրատեսա- կան է:

Ինչ վերաբերում է «սուպերբակտերիա- նի» դեմ նոր դեղամիջոցների ստեղծմանը, ապա այդ աշխատանքը թանկ է եւ դժվար:

Վիճակագրության համաձայն Եվրամիու- թյունում տարեկան մոտ 25 հազար մարդ մահանում է վարակներից, որոնք զգայուն չեն հակաբիոտիկների հանդեպ: Հաճախ այդպիսի վարակները հանդիպում են Հու- նաստանում, Իտալիայում, Հունգարիայում, Բուլղարիայում եւ Կիպրոսում: Որպես կա- նոն, այդ երկրներն էլ առաջին շարքերում են հակաբիոտիկների օգտագործման քանա- կով:

Երկու տարի առաջ ԱՀԿ-ն զգուշացրել է, որ հակաբիոտիկների չարաշահումը սպառ- նում է աշխարհը գլոբալ անցյալի գիրկը, երբ վարակներն անբուժելի էին: Նախագուշա- ցումներին ուշադրություն չդարձրին:

Բրիտանիայի առողջապահության նա- խարարությունն էլ իր կողմից առաջարկում է չընդունել հակաբիոտիկներ երկար ժամա- նակ եւ նախապատվություն տալ կոնկրետ վարակների դեմ նեղ ուղղվածության հակա- բիոտիկներին:

Ուժեղ փոթորիկը կարող է խորակել Նյու Յորքը

Գլոբալ տաքացման եւ օվկիանոսի տա- րածման արդյունքում Նյու Յորքը կարող է անգոր լինել տարեքի հարվածների առաջ:

10 տարի հետո ուժեղ փոթորիկը կհան- գեցնի մեգապոլիսի հեղեղման: Դա նոր հո- լիվոլոյան ֆիլմի ապոկալիպտիկ սցենար չէ, այլ՝ իրական կանխատեսում, որը ներկա- յացված է Կոլումբիայի եւ Կոռնելյան համալ- սարանների գիտնականների կողմից:

Ձեկույցում ասված է, որ գլոբալ տաքաց- ման եւ ծովերի մակարդակի բարձրացման հետեւանքով «երեք չքնող քաղաքը» կա- ռող է ջրի տակ հայտնվել հենց առաջին ու- ժեղ փոթորիկից հետո: Ձեկույցը կոչ է անում քաղաքային իշխանություններին անհրա- ժեշտ միջոցներ ձեռնարկել արդեն այսօր, որպեսզի հետագայում խուսափեն խոշոր մասշտաբի ողբերգությունից:

Ձեկույցում մասնավորապես ասված է, որ 1 ժամից պակաս ժամանակահատվա- ծում Նյու-Յորքի փողոցները կարող են ջրի տակ մնալ, ինչն էլ կհանգեցնի Մանհեթն տանող բազմաթիվ թունելների հեղեղման: Քաղաքի այս ամենախայտնի ու հարուստ թաղամասն էլ կարող է դառնալ ամենավ- տանգավոր տեղը փոթորիկի դեպքում:

